

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

1966 Մայիս — Դեկտեմբեր 1966

ԶԱՆԱԶԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոյն շրջանին ձեռնարկեցինք կարգ մը բարեկարգութեանց եւ իրադարձուեցան հետեւեալ աշխատանքները։—

1.— Մատենադարանին հնատիպ գիրքերը հաւաքուեցան եւ ղետեղուեցան մասնաւոր սենեակի մը մէջ։

2.— Տանիքի սենեակը յատկացուեցաւ տղաներու եւ քարտէշներու։

3.— Կազմուած թերթերու հաւաքածոներուն համար շինուեցան երկաթեայ դօրաւոր դարաններ, չէնքին երկրորդ յարկին վրայ։

4.— Մօտաւորապէս 350 անկազմ թերթերու հաւաքածոներ կազմուեցան։

5.— Ընթերցարահի թերթերուն եւ հանդէսներուն համար շինուեցան երկու խոշոր թերթակայներ։

6.— Հայաստանի մէջ պատրաստուելիք հնատիպ գիրքերու ցուցակի մը տպագրութեան առթիւ, մատենադարանին հնատիպ գիրքերու ցանկի մը պատրաստութեան համար տրամադրած ենք մեր բոլոր գիրքութիւնները եւ միջոցները։

ՆՈՐ ԳԻՐԲԵՐՈՒ ՍՏԱՅՈՒՄ

Սոյն շրջանին՝ սեփականացուած, նուէր ստացուած, գնուած եւ փոխանակութեամբ ստացուած գիրքերու ընդհանուր թիւը եղաւ մօտաւորապէս 3500 հատոր, որոնցմէ 395 հատոր որպէս նուէր, 76 հատոր գնուած եւ

28 հատոր փոխանակութեամբ ստացուած։ Պարտք կը զգանք մեր մասնաւոր չնորհա-կալութիւնները յայտնել Սատարանի Տէր եւ Տիկ. Ղազար Եահնեաններուն, որոնք ԸՆՍԱՅՔԼՕԲԻՏԻԱ ՊՐԻԹԱՆՆԻԲԱ-յի 1965-ի տպագրութիւնը եղող 24 հատորները նուիրեցին։

ԱՅՑՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս ամէն տարի, այս շրջանին եւս ունեցանք մեծ թիւով այցելուներ, որոնց շարքին կը գտնուէին հետեւեալները։—

1.— Կիւմէի Թանգարանին Մատենադարանապետը՝ Պր. Արիսն Բօզիւ։

2.— Վիլլա Նօթր Տամի Ֆրանսական Օրթոտօքս Եկեղեցիի Եպիսկոպոսը՝ Մօն. Ժան Տր Սէն Տէնիս։

3.— Ամերիկեան եւ Սուրիական Հիւսպատաները։

4.— Պաղեստինի շրջանի Եու-էս-Այ-էսի Ընդհանուր Տնօրէնը։

5.— Անկլիքան Եկեղեցւոյ Միարանութենէն ուսուցիչներ եւ ուսումնասիրողներ։

ՆՐԱԳԻՐՆԵՐ

Պիտի ձեռնարկենք նաեւ հետեւեալ ծրագիրներու իրադարձման։—

1.— Գիրքերու պահպանում եւ պաշտպանութիւն ընդդէմ միջատներու եւ կրծող որդերու՝ քիմիական նիւթերով։

- 2.— Ընդհանուր ներքին բարենորոգում հայ վիճակէն փոփոխում երկաթեայ սլա-
նեղ, ծեփ, ելեկտրական զիւրութիւն- տուհաններու :
նեղ, եւլն : 5.— Նիւթերու մասնաւոր նոր զատ-
3.— Յուշագրութեան արդի միջոցներ : ւորումներ, օրինակ՝ հնաաղայ, հայաղիտա-
4.— Պատուհաններու ներկայ տախտակ- կան, եւլն :

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ

	Յ . Տ . Ֆիլս
1.— Նոր գիրքերու եւ թերթերու զնում	101·530
2.— Գրեւական պիտոյք	89·365
3.— Այլեւայլ ծախքեր.— Մանր ծախք, եւլն .	139·875
4.— Զանազան աշխատավարձք	133·050
5.— Թղթատարական ծախքեր	74·920
6.— Թերթերու եւ գիրքերու կազմողչէք	145·000
7.— Մանր նորոգութիւնք	68·220
8.— ՍԻՈՆ-ի հետ փոխանակուած թերթերու փոխարէն վճարուած ՍԻՈՆ-ին	65·000
9.— Ամսականք	136·000
10.— Զանազան վաւերացուած ծախքեր	241·830
ԳՈՒՄԱՐ.— Յ . Տիմար	1194·790

ՂԵԻՈՆԴ ԱՐՂ . ՍԱՄՈՒՐԵԱՆ

Տեսուչ Կիւլպէնկեան Մատենադարանի
Առաք. Արքուդյն Սրբոց Յակոբեանց ,

31 Դեկտեմբեր 1966

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ